ԱՆՀԱՆԴՈՒՐԺԵԼԻ ԱՆՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության պետական տեսչության պետի տեղակալ Վարդգես Բաբայանը նախկին տիրոջից գնելով Մոսկովյան 8 չորս հարկանի բնակելի շենքի արևելակողմի անկյունային մասի կիսանկուղային հարկի սենյակները, դարձնում է այն բար: Նախքան այդ նա մեծացնում է սենյակների բարձրությունը՝ հատակը 60 սմ իջեցնելով, իսկ թե այդ գործողություններից որքանով են տուժում ծանր շինության հիմքերն ու հիմնատակը, մնում է անհայտ, քանի որ «վերանորոգումները» կատարվում են փակ դռների հետևում:

Այնուհետև նախկին սեփականատիրոջից գնելով ներքնահարկի շարունակությունը, Բաբայանը աշնան սկզբից «վերանորոգում» է այս ներքնահարկը, համատարած իջեցնելով հատակը 50-60 սմ-ի չափով, այդտեղից հեռացնելով մի քանի տասնյակ մեծ բեռնատարներով քար ու ապար: Նա իրականում մերկացնում է շենքի մոտ 40 մետր երկարության բոլոր կրող պատերի հիմքերը, վերացնում կոշտություն պահպանող պատերը, քանդում, լայնացնում դռների բացվածքները, օդափոխության համար քանդում կրող պատերի զգալի հատվածներ ու այդպիսով փաստորեն կիսավթարային վիճակի է հասցնում շինությունը, քանի որ այդ վիճակին հասցված հիմքերը մինչև նրանց ամրացումը չեն կարող դիմագրավել նույնիսկ միջակ ու թույլ երկրաշարժերը, որպիսիք Երևանի տարածքում կարող են տեղի ունենալ ամեն պահ:

Ցավալին այն է, որ այս ամենը կատարվում է առանց դրա համար թույլտվություն ունենալու, այն էլ մայրաքաղաքի կենտրոնում, թաղապետարանի աչքի առջև:

Տողերիս գրողը՝ լինելով 50-ական թվականներին կառուցված այդ շենքի նախագծի հեղինակը և բնակիչը, փորձել եմ հասկացնել իրենց գործողությունների անօրինական լինելը, շինարարական կանոններից խիստ շեղվելու փաստերը, և որպես արդյունք՝ վաստակել եմ ներքնահարկ մտնելու իրավունքից զրկվելը ու այժմ այնտեղի քանդումները կատարվում են խիստ փակ դռների հետևում, մեզ անհայտ ձևերով ու չափերով, իսկ բնակիչներս ամեն օր պարզապես ականատեսներն ենք ապարով բարձված բեռնատար մեքենաների անցուդարձի:

Ունենալով նաև բնակիչների լիազորությունը և խնդրանքը, հոկտեմբերի սկզբներին դիմել եմ «Կենտրոն»-ի թաղապետ պրն. Արարատ Զուրաբյանին։ Այդ հիման վրա զգալի ուշացումով շինարարություն եկած երիտասարդը փաստորեն տեղյակ չէր թե իրերի վիճակին, թե գանգատիս բովանդակությանը. նա շինարարի հետ խոսքը մեկ արած ամեն ինչ լավ համարելով գնաց։

Հոկտեմբերի կեսերին դիմեցի քաղաքապետ պրն. Ռոբերտ Նազարյանին, որ անօրինական քանդումները շարունակվում են, խնդրելով առաջն առնել։ Այս հիման վրա, քաղաքապետարանի ճարտարապետաշինարարական վերահսկողության վարչության պետ պրն. Հրաչ Մուրադյանը բացարձակապես անտեղյակ լինելով իրերի տխուր վիճակին, հոկտեմբերի 24-ին ինձ գրում է. «… հայտնվում է, որ շենքի նկուղային հարկում կատարվող ընթացիկ նորոգման և հարկի բետոնացման [?] աշխատանքները չեն կարող ազդել Ձեր շենքի սեյսմակայունության վրա»։ Իր իսկ՝ Հ. Մուրադյանի խորհրդով, ավելի գործնական և օգտակար կլինի դիմել Քաղաքաշինության պետական տեսչության նախագահ պրն. Գրիշա Միրզոյանին։ Այդպես էլ արեցի։

Պրն. Միրզոյանը և իր աշխատակից պրն. Մատինյանը խոստացան իմ տրամադրության տակ դնել Սեյսմիկայի գիտահետազոտական ինստիտուտի մանրամասն տվյալները Մոսկովյան 8 շենքի սեյսմակայունության վիճակի և անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ։ Այդպես էլ պրն. Միրզոյանից ոչ ոք չեկավ և ոչ մի ուսումնասիրություն և եզրակացություն չներկայացվեց, մինչ նրա տեղակալ պրն. Վարդկես Բաբայանը առ այսօր նկուղային հարկի փակ դռների ներսում շարունակում է քանդման աշխատանքները։ Այս վերջինս շինարարության ոլորտն է ընդգրկել ինչպես իրեն չպատկանող մոտ 25 մետրանոց նկուղային հատված, այնպես էլ 3-րդ մուտքի տարածքը և այդ մուտքով կազմակերպել օդափոխությունը, որը կանոնների խախտում է, այժմ էլ ողջ շինարարական փոշին կուտակվում է մուտքի հարկերում, բնակիչներին դնելով հակասանիտարական կացության մեջ։

Եվ քանի որ շինության հիմքերի մերկացումը շարունակվում է, ինձ մնում էր դիմել հանրապետության Նախագահին, և որպեսզի ժամանակ չվատնվի, դիմումիս տվի հեռագրի ձև, համառոտ նկարագրելով վերոհիշյալը, խնդրելով կարգադրել

վերջ տալու վայրենությունը շինության կայունության նկատմամբ, նաև նշելով, որ եթե քանդումներն իրականացվում են առանց նախագծի և տեխնիկական գրագետ հսկողության, ապա դրությունն անուղղելի կլինի, եթե նույն ձևով և առանց նախագծի իրականացվեն բետոնապատման աշխատանքները։

Այս վերջին հույսս փոխարկվեց հիասթափության, երբ պարզ դարձավ հանրապետության Նախագահի վերահսկողական աշխատակազմի անգործունյա և անօգնական լինելը։ Նոյեմբերի 25-ի հեռագրի նշանակության ոչ մի նշույլ մինչ այս հոդված գրելը՝ 3 դեկտեմբերի 2001 թ.։

Որպես 20-րդ դարի զավակ, ակամայից հիշում եմ, որ այսպիսի դեպքերում, ծայրահեղ անօգնական, կարելի է ասել՝ անտեր զգալու դեպքում, մարդիկ նամակ էին հղում «Լենինի դամբարանին»։ Միտք հղացավ նամակ հղել Աղցի մեր Արշակունիների դամբարանին։ Այս թողնելով վաղվան, մտածում եմ, թե մեր օրերում միթե՞ հանդուրժելի է այսքան անտերություն, մարդկային անօգնականության զգացում։ Ասում էին, չէի հավատում, որ մարդիկ ընկնելով այսպիսի իրավիճակի մեջ, բարվոք են համարում լքել հայրենիքը, մեկնել դեպի անհայտություն։ Ինչ կլինի մեր վիճակը, եթե բյուրոկրատական այսպիսի մթնոլորտը, այս անհանդուրժելի անտերությունը դառնա համատարած։ Այս քար անտարբերությունը ուղիղ ճանապարհն է դեպի ամեն ինչի կործանում։

Զարմանում եմ նաև այս փոքրիկ հայրենիքում այսքան շատ կուսակցությունների վրա. նրանք չե՞ն տեսնում վարչական բյուրոկրատական ապարատի չինովնիկների անգործնականությունը, փոխարենը այսքան խոսում ու ճառում են ամեն մեկը «հայոց թագավոր» դառնալու բարբաջով տարված։

Նշենք նաև, որ մեր քաղաքում, թերևս նաև հանրապետության մյուս քաղաքներում վերջին տարիներս տարածում գտած նկուղահարկերի օգտագործման «վերածնունդի» հետևանքով շատ շինություններ, մեր վերը նկարագրածի նմանողությամբ, կորցրել են իրենց երկրաշարժադիմադրողականությունը։ Ստացվում է, որ հակառակ որոշումների՝ ուժեղացնել շինությունների կայունությունը՝ իրականում թուլացրել ենք այդպիսիք։ Թող որ նոր նկուղահարկերով շենքերի բնակիչները իրենց նախաձեռնությամբ մասնագիտական քննության ենթարկեն իրենց շենքերի

հիմքերի ու հիմնատակերի վիճակը տվյալ առումով։ Այդ խիստ և շուտափույթ ձեռնարկում է պահանջում. պետք է ամրացվեն հիմնապատերը անպատեհ դեպքերում զոհեր և այլ կորուստներ չտալու համար։

Տիրան Մարության

Հայաստանի վաստակավոր շինարար,
ճարտարապետության դոկտոր

3.XII. 2001 թ.